# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
# «ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2025/24» ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

12.05.2025թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ - Վ. Մուրադյան

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Կուպալյան

Ղ. Ղուկասյան

Հանձնաժողովի քարտուղար՝ - Ս. Խուրշուդյան

1. **Գնման ընթացակարգի հայտ ներկայացրած մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.**

Ընդունել ի գիտություն՝

1.1 Համակարգի կողմից 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած «ԻԶԻԹԵՋ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ, համակարգով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագիր դաշտում արձանագրված անհամապատասխանությունների մասին 06.05.2025թ.-ին ծանուցվել է վերջինիս՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից շտկված ապրանքի ամբողջական նկարագիրը eauction.armeps.am համակարգով ներկայացվել է: 12.05.2025թ. փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում մասնակցի ոչ գնային պայմանները հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ-0

2. **Պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին:**

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

2.1 Ընդունել ի գիտություն, որ 6-րդ չափաբաժնով մասնակիցների ներկայացրած հայտերը մերժվել են www.eauction.armeps.am էլեկտրոնային հարթակի կողմից՝ մինիմալ գնի կրկնության հիմունքով: 6-րդ չափաբաժնի մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի:

2.2. «ԻՋԻԹԵԳ» ՍՊԸ-ի, «Նուրթբուք Սթոր» ՍՊԸ-ի, «Աքսել» ՍՊԸ-ի, «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ–ի փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում մասնակիցների ոչ գնային պայմանները գնահատել բավարար:

1-ին և 2-րդ չափաբաժիններով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «ԻՋԻԹԵԳ» ՍՊԸ-ի –ին:

3-րդ, 8-րդ և 10-րդ չափաբաժիններով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «Նուրթբուք Սթոր» ՍՊԸ –ին:

4-րդ չափաբաժնով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «Աքսել»-ՍՊԸ –ին:

5-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժիններով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ –ին:

2.3 Հաստատել **«ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2025/24»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Անգործության ժամկետի ավարտից հետո (10 օրացուցային օր) հաղթող մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ կներկայացնվի:

Բոլոր գործողությունները իրականացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ-0

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ - Վ. Մուրադյան

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Կուպալյան

Ղ. Ղուկասյան

Հանձնաժողովի քարտուղար՝ - Ս. Խուրշուդյան